50751100	Վանաձոր համայնքի Չուխաջյան թաղամասի թիվ 3 բազմաբնակարան շենքի վերելակի նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	3102536	1	3102,536
50751100	Վանաձոր համայնքի Երևանյան խճուղու թիվ 147/1 բազմաբնակարան շենքի 3-րդ շքամուտքի վերելակի նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	3211249	1	3211,249
50751100	Վանաձոր համայնքի Չերկասի փողոցի թիվ 4 բազմաբնակարան շենքի 1-ին շքամուտքի վերելակի նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	3521608	1	3521,608

50751100	Վանաձորի համայնքի Չերկասի փողոցի թիվ 4 բազմաբնակարան շենքի 2-րդ շքամուտքի վերելակի նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	3681235	1	3681,235
Բաժին -06 խումբ -3 դաս-1						
Ծառայություններ /հոդված-4239/						
98111140	Վանաձորի համայնքի կարիքների համար Հայքի հրապարակի, Շառլ Ազնավուրի անվան զբոսայգու, Տարոն-4 թաղամասի Մարդու իրավունքների այգու և Սայաթ Նովայի անվան այգու շատրվանների և ջրավազանների սպասարկման և վերանորոգման ծառայություններ	ՄԱ	դրամ	11 685 070	1	11 685.0
Բաժին -06 խումբ -4 դաս-1-Փողոցների լուսավորություն						
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ /Հոդված 4239/						
50231200	Վանաձոր համայնքի փողոցային լուսավորության, շենքերի արտաքին լուսավորության սպասարկում և շահագործում	ԳՀ	դրամ	*	1	*
50231200	Վանաձոր համայնքի փողոցային լուսավորության, շենքերի արտաքին լուսավորության սպասարկում և շահագործում	ԳՀ	դրամ	19995100	1	19995100
Աշխատանքներ /հոդվածը - 5113/						
Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի Բելառուսական 36 փողոցի լուսավորության, Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության և Գուգարք բնակավայրի Քոթեջային 8-րդ փողոցի լուսավորության վերականգնում						
45451800	Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի Բելառուսական 36 փողոցի լուսավորության վերականգնում	ԳՀ	դրամ	564000	1	564.0
45451800	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության վերականգնում	ԳՀ	դրամ	2388000	1	2388.0

45451800	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի Քոթեջային 8-րդ փողոցի լուսավորության վերականգնում	ԳՀ	դրամ	876000	1	876.0	
45231220	Վանաձոր համայնքի Եղիշե Չարենցի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	38699342	1	38699342	
45231220	Վանաձոր համայնքի Վահան Տերյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում	ԲՄ	դրամ	117018000	1	117018,0	
Բաժին -06 խումբ -5 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ							
նախագծանախահաշվային աշխատանքների կազմման աշխատանքներ/հոդված 5134/							
71241200	Վանաձոր համայնքի թվով 50 հատ բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման և խաղահրապարակների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	7400000	1	7400.0	
71241200	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի կոյուղատարի հիմնանորոգման, առաջնային մաքրման փոքր կայանի կառուցման հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	1800000	1	1800,0	
71241200	Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգում՝ ճանապարհային երկաթբետոնե սալերի տեղադրմամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	1795000	1	1795,0	
71241200	Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	1445000	1	1445,0	

71241200	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտայի Հայքի հրապարակից Թումանյան հրապարակ հատվածի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	2640000	1	2640.0
71241200	Վանաձոր համայնքի Լոռի մարզադաշտին մոտեցող Հակոբյան, Աբովյան, Արաբկիրի, Բուսաբանական փողոցների , 2. Անդրանիկի 1-ին նրբանցքի հիմնանորոգման, ավտոկայանատեղիների կառուցման, տրանպորտային հանգույցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	4695000	1	4695.0
71241200	Վանաձոր համայնքի թիվ 8 մանկապարտեզի բակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	1350000	1	1350,0
71241200	Վանաձորի համայնքապետարանի տիկնիկային թատրոնի մայթի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	1400000	1	1400,0
71241200	Վանաձորի համայնքապետարանի համակարգչային ներքին ցանցի նախագծման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	*	1	*
71241200	Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց 1-ին նրբանցք 13 հասցեի հարևանությամբ հենապատի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	750000	1	750,0

Նախագծանախահաշվային աշխատանքների կազմման աշխատանքներ/հոդված 5134/

71241200	Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոցից մինչև Բուսաբանական փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	2500000	1	2500,0
71241200	Վանաձոր համայնքի Շիրակացու փողոց՝ Ֆիդայիների փողոցից մինչև Կ. Դեմիրճյան փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	2000000	1	2000,0
71241200	Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	2000000	1	2000,0
71241200	Վանաձորի համայնքի Շիրակացու փողոց 1-ին նրբանցք՝ դեպի «ՀՍԻԿ» գրասենյակ տանող ճանապարհի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	1500000	1	1500,0
71241200	Վանաձորի համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր փողոց՝ Կ. Դեմիրճյան փողոցից մինչև 1-ին փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	2000000	1	2000,0
71241200	Վանաձորի համայնքի Շահումյան բնակավայրի ֆուտբոլի դաշտի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	2500000	1	2500,0

71241200	Վանաձորի համայնքի Շահումյան բնակավայրում սպորտային խաղահրապարակի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	1200000	1	1200,0
71241200	Վանաձորի համայնքի Գուգարք բնակավայրում խաղահրապարակի կառուցում (1-ին փողոց բազմաբնակարան շենքի հարևանությամբ) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	1200000	1	1200,0
71241200	Վանաձորի համայնքի Գուգարք բնակավայրում խաղահրապարակի կառուցում (Էներգետիկների 5-րդ և 4-րդ փողոցների միջև) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	1200000	1	1200,0
71241200	Վանաձորի համայնքապետարանի համակարգչային ներքին ցանցի նախագծման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	ԳՀ	դրամ	1855000	1	1855,0
Նախագծանախահաշվային աշխատանքների կազմման աշխատանքներ/հոդված 5134/						
71241200	Վանաձոր համայնքի Կարբիշևի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	400000	1	400,00
71241200	Վանաձոր համայնքի Աբովյան փողոցից դեպի Բանակի փողոցի խաչմերուկից հարավ տանող ձախակողմյան մայթի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	250000	1	250,00

71241200	Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	400000	1	400,00
71241200	Վանաձոր համայնքի Մառի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	450000	1	450,00
71241200	Վանաձոր համայնքի Աղյուսագործների փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	400000	1	400,00
71241200	Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	500000	1	500,00
71241200	Վանաձոր համայնքի Սարի թաղ 1-ին փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	600000	1	600,00
71241200	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մի շարք երկրորդային փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	500000	1	500,00
71241200	Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցից մինչև Բելառուսական թաղամասի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	500000	1	500,00
Փորձաքննության ծառայություններ/հոդված-5134/						


50531140	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ					3750,0	
50531140	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտայի Հայքի հրապարակից Թումանյան հրապարակ հատվածի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	1200000	1	1200,0	
50531140	Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգման՝ ճանապարհային երկաթբետոնե սալերի տեղադրմամբ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	450000	1	450,0	
50531140	Վանաձոր համայնքի Ուսանողական, Շինարարների և Վ. Համբարձումյան փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	2100000	1	2100,0	
50531140	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ					379,3	
50531140	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի ֆուտբոլի դաշտի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	169800	1	169,8	
50531140	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրում սպորտային խաղահրապարակի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	65500	1	65,5	
50531140	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրում խաղահրապարակի կառուցման /1-ին փողոց բազմաբնակարան շենքի հարևանությամբ/ նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	72000	1	72,0	

50531140	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրում խաղահրապարակի կառուցման /էներգետիկների 5-րդ և 4-րդ փողոցների միջև/ նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	72000	1	72,0
Բաժին-06 խումբ-6 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (ալլ դասերին չպականող)						
Աշխատանքներ /հոդված 5113/ Բակերի բարեկարգում						
45221142	Վանաձոր համայնքի թիվ 8 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	11 683 700	1	11 683.7
Բաժին -08 խումբ -1 դաս-1 Հանգստի և սպորտի ծառայություններ						
սպորտային միջոցառումներ/հոդված 4239/						
92621110	սպորտային միջոցառումների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	9457777	1	9457,777
92621110	Համահայկական ծմեռային 2-րդ խաղերի սպորտային միջոցառման մասնակցության կազմակերպման ծառայություն	ԷԱՃ	դրամ	10977777	1	10977,777
92621110	Վանաձոր համայնքի երիտասարդների ակտիվ հանգստի և սպորտային միջոցառումների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	3 024 500	1	3024.500
Բաժին -08 խումբ -4 դաս-1 Երիտասարդական ծրագրեր						
Ծառայություններ/ հոդված 4239/						
80311100	Էներգիայի շաբաթ-2025	ՄԱ	դրամ	995000	1	995,00
Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգստի, մշակույթ և կրոն						
մշակութային միջոցառումներ/հոդված 4239/						
79951110	մշակութային միջոցառումների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	9117777	1	9117.777

	Աշխատանքներ /հոդված 5113/						
45611300	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց ԿՈՒՀ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	44317930	1	44317.93	
	Ծառայություններ /5113/						
71351540	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց ԿՈՒՀ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	728230	1	728.23	
98111140	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց ԿՈՒՀ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	218470	1	218.47	

*համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի

Գնումների բաժնի պետ՝



Դավիթ Հակոբյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2025 թվականի N 1961

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-1 ԹԱՂԱՄԱՍ 1/14-15
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ
ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Ենոքի Մագթաղյանի 21.03.2025 թվականի թիվ 02/3979 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09072025-06-0019 վկայականը, 01.02.2016 թվականի թիվ 27 համաձայնագիրը, 23.05.2008 թվականի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 357 պայմանագիրը, 25 հունվարի 2016 թվականի Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի թիվ 42-Ա որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-1 թաղամաս 1/14-15 հասցեում գտնվող 18.4քմ մակերեսով ավտոտնակի և 20.4քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգել մինչև՝ 31.12.2030 թվականը:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Գագիկ Ենոքի Մագթաղյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 18.4քմ մակերեսով ավտոտնակի և 20.4քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 1.0քմ մակերեսով ավտոտնակի համար վճարի չափը ամսական սահմանելով 12 (տասներկու) ՀՀ դրամ և 20.4քմ մակերեսով հողամասի համար վճարի չափը ամսական սահմանելով 245 (երկու հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-1 թաղամաս 1/14-15 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տարոն-1 թաղամաս, 1/13 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2025 թվականի N 1962

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 5 ՇԵՆՔ, 4
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՑ ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԳՈՏՈՒՄ ՏԻԳՐԱՆ ՎԱԼԵՐԻԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՎ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 5 ՇԵՆՔ, 4
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Վալերիի Ստեփանյանի 22.07.2025 թվականի թիվ 02/10320 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18072025-06-0030 վկայականը, 21.07.2025 թվականի անշարժ գույքի նվիրատվության թիվ 3920 պայմանագիրը /նոտարական ակտի կոդ: 843-20250721-4-09212711/, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.12.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20233NSNJ6), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 05.08.2025թ տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 185/25 Ի եզրակացությունը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱԶ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) և գ) ենթակետերով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Տիգրան Վալերիի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շիրակացու փողոց 5 շենքի շենքի ծավալից դուրս, շենքի սպասարկման գոտում, թիվ 4 բնակարանին կից 13.66 քմ արտաքին մակերեսով /12.95 քմ ներքին մակերես / և Շիրակացու փողոց 5 շենքի շենքի ծավալից դուրս, շենքի սպասարկման գոտում, թիվ 4 բնակարանին բնակարանում կատարված թվով 12 ինքնակամ ձևափոխումները:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 13.66 քմ արտաքին մակերեսով /12.95 քմ ներքին մակերես / մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը 11168 /տսնմեկ հազար հարյուր վաթսուներե/ ՀՀ դրամ և թվով 12

ինքնական ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 32700 /երեսուներկու հազար յոթ հարյուր / ՀՀ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. օգոստոսի 18
ք. Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N1963

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ 10/1
ՀԱՍՅԵՌԻՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎԱՍԵՓ
ՊՅՈՏՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովսեփ Պյոտրի Մարտիրոսյանի լիազորված անձ Սիրանուշ Պյոտրի Մարտիրոսյանի 18.01.2024թ. թիվ 02/1154 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20052025-06-0066 վկայականը, 19.03.2021 թվականին տրված թիվ 1152 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20210319-79-4994922), 13.05.2024թ.. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ռիսանողական փողոց 10/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 111.0 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 86.7քմ) ավտոտնակը 218560 (երկու հարյուր տասնութ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 71.0քմ մակերեսով հողամասը 315370 (երեք հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հովսեփ Պյոտրի Մարտիրոսյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Հովսեփ Պյոտրի Մարտիրոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N1964

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 1 ՇԵՆՔԻՆ
ԿԻՑ ՑԱՆԿԱՊԱՏԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված արձանագրություն, զեկուցագի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 22.07.2025 թվականին կազմված արձանագրության ու զեկուցագրի համաձայն Վանաձոր քաղաք Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 1/37 հասցեի բնակիչ Վերգինե Մելքոնյանի կողմից ինքնակամ զավթվել է նույն հասցեի շենքի սպասարկման համար անհրաժեշտ հողամասը, ցանցով պարսպապատվել է տարածքը, տեղադրվել է դուռ:

Վերգինե Մելքոնյանի կողմից զավթված հողամասի պարսպապատման և փաստացի տիրապետման արդյունքում փակվել է շենքի սպասարկման համար անհրաժեշտ ելքերն ու մուտքերը, որը խոչընդոտում է ազատ տեղաշարժին բացի այդ զավթված հողամասում առկա է ինքնակամ շինություն՝ փոքրիկ մառան:

2025 թվականի հուլիսի 22-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի օգոստոսի 08-ին իրավիրվել են վարչական վարույթի լուսմներ: Վարչական վարույթի լուսմներին ներկայացել է Վերգինե Մելքոնյանը, ով հանդիսանում Ներսիսյան փողոց, 1 նրբ. 37 բնակարանի սեփականատեր: Վերգինե Մելքոնյանը հայտնեց, որ բնակարանի ճակատային մասում պատժգամի ուղղությամբ հանգուցյալ հայրը՝ Արիկ Մելքոնյանը, 1976 թվականին կառուցել է ինքնակամ շինություն և ցանկապատել է շենքի կողային մի հատվածը,

որը օգտագործվել է, որպես այգի, վերջինս հավելել է նաև, որ վատառողջ է և վճարունակ չէ և իր ուժերով չի կարող տարածքը մաքրել, սակայն դեմ չէ որպեսզի ազատել այն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները.

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի

սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնական կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ինքնական կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՈՐՈՇԵՑԻ

1. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի «Վանաձորի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի և իրավապահ մարմինների օժանդակությամբ քանդել Վանաձոր համայնքի Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 1 շենքին կից ցանկապատը եվ ինքնական շինությունը
2. Առաջարկել ՀՀ ոստիկանությանը Վանաձորի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
3. Վանաձորի համայնքապետի որոշմամբ նախատեսված քանդման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնական կառույցն իրականացրած անձից:
4. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձորի համայնքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովվում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1965

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1835 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 04.08.2025 թվականի Վանաձոր համայնքի թիվ 1835 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 04 օգոստոսի 2025 թվականի «Վանաձոր համայնքի գյուղ Գուգարք, 6-րդ փողոց 1-ին փակուղի 1 հասցեում գտնվող Սասուն Ժորժիկի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 1835 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման 2-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետերը խմբագրել հետևյալ նոր բովանդակությամբ.

ա. 0.0623 հա մակերեսով հողամասին /հողամասում առկա 203.44քմ մակերեսով ինքնակամ բնակելի տունը թողնել ինքնակամ/ տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 6-րդ փողոց, 1-ին փակուղի, 1 հողամաս:

բ. 0.1477 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 455.63քմ մակերեսով բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 6-րդ փողոց, 1-ին փակուղի, 1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N1966

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՖՐԻԿԻ ՓՈՂՈՑ 39 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԳՈԳԱ ՄԱՐԱՏԻ ԻՓԱԿՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՍՈՆ ՍԱՄՎԵԼԻ
ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՉՈՐՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ
ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոգա Մարատի Իփակյանի և Սամսոն Սամվելի Մարգարյանի 25.07.2025 թվականի թիվ 02/10511 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22072025-06-0047 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, 24.07.2025թ. թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025XJGC89, 2025HYRHPF, 2025MU3CTW), 04.08.2025թ. թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025N96DXH), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ֆրիկի փողոց 39 հասցեում գտնվող Գոգա Մարատի Իփակյանին և Սամսոն Սամվելի Մարգարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1, 2, 3 և թիվ 4 հատակագծերի:

ա. 0.00526 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ֆրիկի փողոց, 39/1 հողամաս:

բ. 0.02071 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 112.63 քմ մակերեսով բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ֆրիկի փողոց, 39 բնակելի տուն:

գ. 0.03957 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ֆրիկի փողոց, 39/2 հողամաս:

դ. 0.00646 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր
համայնք, Վանաձոր ք., Ֆրիկի փողոց, 39/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. օգոստոսի 19
ք. Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N1967

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
2060 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիգեն Վալերիկի Տիրացվյանի 28.08.2023թ թիվ 02/14726 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 09 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 2060 որոշումը, 05.03.2025 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 7-Լ որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24072025-06-0016 և Վիգեն Վալերիկի Տիրացվյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14032018-06-0028 վկայականները, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 09 սեպտեմբերի 2024 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ- 7 թաղամաս 15/8-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված հողամասը Վիգեն Վալերիկի Տիրացվյանին նախապատվության իրավունքով օտարելու և հողամասին նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2060 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման վերնագիրը «օտարելու» բառից հետո լրացնել «,հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը հաստատելու» բառերով:
2. Որոշման նախաբանում և որոշման 1-ին կետում «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման հատակագիծը» բառերը փոխարինել «05.03.2025 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 7-Լ որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը» բառերով:
3. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1-ին կետով «Համապատասխանեցնել

(հաստատել) Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՀՀ-7 15/8-1 (հողամասի ծածկագիր՝ 06-001-0009-0072) հասցեում գտնվող 0.00198հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, որպես բնակավայրերի նշանակության հողեր, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր, համաձայն Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը /գլխավոր հատակագիծ/»:

4. Որոշման «1-ին», «2-րդ» և «3-րդ» կետերը կարդալ հետևյալ հաջորդականությամբ որպես «2-րդ», «3-րդ» և «4-րդ» կետեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 19
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1968

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ 5/3-2
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ,
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Վարդգեսի Թովմասյանի 30.06.2025 թվականի թիվ 02/9032 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21112019-06-0071 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ**

1. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նալբանդյան փողոց 5/3-2 հասցեում գտնվող 58.72քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի, իսկ շինության օգտագործման նպատակը փոխել տարածքից՝ գրասենյակի:

2. 01 հա մակերեսով ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով հողամասի և 275.08 քմ շենքի ընդհանուր ճգտագործման տարածքների նկատմամբ սեփականատիրոջ բաժինը կազմում է 59/32

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Մ. Նալբանդյան փողոց, 5 շենք, 1 գրասենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1969

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ 1/13
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԱՅԻԿ
ՄԵԽԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Մեխակի Սարգսյանի 20.06.2023թ. թիվ 02/10112 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03042025-06-0049 վկայականը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Հ. Ներսիսյան թաղամաս 1/13 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 35.05քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 32.3քմ) մառանը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 39.8քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Արայիկ Մեխակի Սարգսյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արայիկ Մեխակի Սարգսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մառանի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, մառանի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 20 /քսան/ ՀՀ դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 18 /տասնութ/ ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N1970

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ԼԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 35/35
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԵՆ
ՎԼԱԴԻՄԻՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Վլադիմիրի Սարգսյանի 07.04.2023թ. թիվ 5673 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13052025-06-0030 վկայականը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ս. Լազյան փողոց 35/35 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 34/12քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 30.66քմ) ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.78քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Արմեն Վլադիմիրի Սարգսյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արմեն Վլադիմիրի Սարգսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 30 /երեսուն/ դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 /քսանչորս/ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1971

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 12/23
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱՌՆԻԿ
ԱՐԱՐԱՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Արարատի Մխիթարյանի 11.08.2023 թվականի թիվ 02/13645 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25122024-06-0026 վկայականը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 12/23 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.0քմ) ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.9քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Գառնիկ Արարատի Մխիթարյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Գառնիկ Արարատի Մխիթարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 30 /երեսուն/ դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 /քսանչորս/ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1972

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ԼԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ 35/2
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԻՆԱ
ՎԱԶԱԳԱՆԻ ԳԻՆՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալինա Վաչագանի Գինոսյանի 25.12.2023 թվականի թիվ 02/23132 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052025-06-0033 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ս. Լազյան փողոց 35/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.3 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 19.0քմ) ավտոտնակ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 17.9քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Ալինա Վաչագանի Գինոսյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Ալինա Վաչագանի Գինոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 30 (երեսուն) դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N1973

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 9 ՇԵՆՔ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նազելի Ռազմիկի Հարությունյանի 14.07.2025 թվականի թիվ 02/9828 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1711391 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 11.07.2025 թվականի անշարժ գույքի բաժնեմասերի սահմանման և բաժնեմասերի նվիրատվության թիվ 4478 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ:763-20250711-4-9180948), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 9 շենք 26 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե, Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 9 շենք, 26 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏՐ



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ օգոստոսի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1974

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԻԶԱՄԻ ՓՈՂՈՑ 78/2 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԱՐԱՄ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

